«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

2024թ.

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Ընկերության անվանում՝	«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
Պետական գրանցման համար՝	269.070.00255
Գրանցման ամսաթիվ՝	28.12.1994թ.
ՀՎՀՀ՝	0205028
Հասցե՝	ՀՀ ք.Երևան Արին-Բերդի 3 նրբ. 3
Էլ. հասցե՝	mailbox@ytpc.am
Ինտերնետային կայք՝	www.ytpc.am

1. ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ
Տնօրենների խորհրդի որոշմամբ
Արձանագրություն № 6
16 օգոստոսի 2024թ.

Խորհրդի նախագահ _____ Ա. Երիցյան

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ Գլխավոր տնօրենի գծով Ա. Բաղդասարյան

2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Համաձայն Ընկերության կանոնադրության և Կորպորատիվ Կառավարման Կանոնագրքի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով,
բ) Խորհուրդ,
գ) Գործադիր մարմին

Ընկերության նշանակալից բաժնետերերն են

Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից:

Ընկերության կանոնադրական կապիտալը 31.12.2024 թվականի դրությամբ կազմում է **34,921,018,573.245 (երեսունչորս միլիարդ ինը հարյուր քսանմեկ միլիոն տասնութ հազար հինգ հարյուր յոթանասուներեք ամբողջ երկու հարյուր**

քառասունհինգ) ՀՀ դրամ, որը կազմում է **12,202,701** (տասներկու միլիոն երկու հարյուր երկու հազար յոթ հարյուր մեկ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, որոնք կազմում են Ընկերության կանոնադրական կապիտալի 100%-ը: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը **2,861.745 (երկու հազար ութ հարյուր վաթսունմեկ ամբողջ յոթ հարյուր քառասունհինգ)** ՀՀ դրամ է:

3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

1. Հաշվետու տարում գումարվել է 5 (հինգ) արտահերթ ընդհանուր ժողով: ԲԸԺ-ները գումարվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հասցեում:

2. Օրակարգը և ԲԸԺ-ի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև բաժնետիրոջ ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետիրոջը տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է խորհուրդը համաձայն Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով:

3. ԲԸԺ-ում քվեարկությունը իրականացվում է Ընկերության կանոնադրության 11-րդ հոդվածի 11.9-րդ կետի համաձայն:

4. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհրդի գործառույթները

Ընկերության կանոնադրության 13-րդ հոդվածի 13.4-րդ կետը սահմանում են Խորհրդի բացառիկ իրավասությունները: Ընկերության կանոնադրությամբ պատվիրակված իրավասություններ չեն սահմանվել:

Խորհրդի կազմը

26.05.2024 թվականի դրությամբ, Ընկերության Խորհուրդը բաղկացած է վեց անդամից, որոնցից հինգը ոչ գործադիր են:

ԽՈՐՀՈՒՐԴ			
Պաշտոնը և անունը	**Գործադիր**[1]	**Ոչ գործադիր**[2]	**Խորհրդի անդամ է սկսած՝**
Նախագահ՝Ա. Երիցյան			02.05.2022թ.
Անդամ՝ Ա. Խաչատրյան			02.05.2022թ.
Անդամ՝Ա. Մելիք-Իսրայելյան			30.09.2016թ

[1] Խորհրդի գործադիր անդամը Ընկերության ամենօրյա ղեկավարման մեջ ներգրավված անձն է:

[2] Համաձայն Կանոնագրքի, Խորհրդի ոչ գործադիր անդամը այն անձն է, ով ներգրավված չէ Ընկերության կամ նրա որևէ դուստր ընկերության ընթացիկ ղեկավարման մեջ:

Անդամ՝ Ռ. Մարուխյան		Ոչ գործադիր	15.09.2022թ
Անդամ՝ Ն. Սարջանյան		Ոչ գործադիր	03.03.2017թ
Անդամ՝ Ա. Բաղդասարյան	Գործադիր		18.01.2024թ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ԵՐԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԳԱԳԻԿԻ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝

06 սեպտեմբերի, 1977թ.

Կրթություն՝ 1994- 1998թթ ՀՊՃՀ բակալավր
1998- 2000թթ. ՀՊՃՀ մագիստրատուրա
2000-2002թթ. ՀՊՃՀ ասպիրանտուրա,

Մասնագիտություն՝ Տրանսպորտի շահագործում և կառավարում, մեքենաշինության արտադրության տեխնոլոգիաներ, տրանսպորտային համակարգեր,

Որակավորում ՝Ճարտարագիտության բակալավր, ճարտարագիտության մագիստրոս,

ճարտարագետ հետազոտող,

Գիտական աստիճան՝ Տեխնիկական գիտությունների թեկնածու 2008թ.

Աշխատանքային փորձառություն՝

02.03.2001- 23.08.2001թթ. - «Դավիթ տրանս» ՍՊԸ՝ ավագ վարպետ

18.05.2002- 07.05.2006թթ.- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն << Հայկական երկաթուղի>> ՓԲԸ՝ բեռների ընդունող-հանձնող, փոխադրումների վարչության երթևեկությանբաժնի ավագ գնացքային կարգավար,

24.05.2006- 07.11.2006թթ. ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե՝ Գուգարքի մաքսատան Գոգավան-Պրիվոլնոյե մաքսային կետի ԱՄԸՀ մաքսային տեսուչ

02.04.2007- 29.10.2010թթ. Երևանի քաղաքապետարանի <<Լուսանշան>> ՊՈԱԿ՝ առաջատար ճարտարագետ

2008-2009 թթ. Ասիստենտ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, «Փոխադրումներ և ճանապարհային երթևեկության կազմակերպում» ամբիոն (համատեղությամբ)

01.11.2010- 02.02.2011թթ. – ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի համայնքային ծառայության հարցերի վարչություն՝ համայնքային ծառայության կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ

02.02.2011-01.04.2011թթ. – ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի համայնքային ծառայության հարցերի վարչություն՝ համայնքային ծառայության կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ (ժամկետային աշխատանքային պայմանագրով)

01.04.2011-10.02.2014թթ. – ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի համայնքային ծառայության հարցերի վարչություն՝ համայնքային ծառայության կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

10.02.2014-01.07.2014թթ. -ՀՀ տարածքային կառավարման նախարարություն համայնքային ծառայության հարցերի վարչության զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ /ժամկետային աշխ.պայմանագրով/

01.07.2014-16.04.2015թթ. -ՀՀ Տարածքային կառավարման նախարարության աշխատակազմ՝ զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ

16.04.2015-21.04.2016թթ. -ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ՝ համայնքային ծառայության հարցերի վարչության համայնքային ծառայության կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ

21.04.2016-09.12.2016թթ. -ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմ՝ վարչական վերահսկողության և համայնքային ծառայության հարցերի վարչության վարչական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ

09.12.2016-17.09.2019թթ. ՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմի վարչական վերահսկողության և համայնքային

ծառայության հարցերի վարչության վարչական վերահսկողության բաժին՝ բաժնի պետ

17.09.2019թ.-18.03.2022թ.՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական վերահսկողության վարչության պետ

19.03.2022թ.ից առ այսօր՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար

Դասային աստիճան՝ ՀՀ քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան-01.07.2014թ.

Ընկերությունում աշխատած տարիներ Ընկերությունում չի աշխատել:

Անձնական պարտականություններ և խնդիրներ՝

Կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում դրանք, կազմակերպում նիստերի արձանագրության վարումը:

Իր պարտականությունները կատարում է, ելնելով Ընկերության շահերից, իրականացնում է իր իրավունքները և Ընկերության նկատմամբ իր պարտականությունները բարեխիղճ և ողջամիտ կերպով:

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ
ԱՐԱՄ ԱՇՈՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝

12 հունիսի, 1992թ.

Կրթություն՝

2009-2013 թթ.- Գավառի պետական համալսարան, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ, բակալավրիատ:

2011-2013 թթ. - Սանկտ Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի, էկոնոմիկայի և իրավունքի ինստիտուտ, իրավագիտություն մասնագիտությամբ, իրավագետի դիպլոմավորված մասնագետի որակավորում:

2013-2016 թթ. - ՀՀ պետական կառավարման ակադեմիա Հանրային իրավունք, ասպիրանտուրա

Աշխատանքային փորձառություն

2013-2014 թթ. - Գավառի «28-ՇՄՇ» ԲԲԸ-ի իրավաբանական բաժնի պետ:

2014-2017 թթ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան,մարզպետի տեղակալի օգնական:

2017-2018 թթ. - ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի հյուսիս-արևելյան տարածքային կենտրոնի ղեկավարի տեղակալ:

2018-2019 թթ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ:

2019-2020 թթ. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ:

2020-2021թթ. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան:

2021 թվականի օգոստոսից-մինչև դեկտեմբերի 15-ը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական:

2021 թվականի դեկտեմբերի 15-ից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ:

Գիտական աստիճան՝ Իրավաբանական գիտությունների թեկնածու

Ընկերությունում աշխատած տարիներ՝ Ընկերությունում չի աշխատել:

Անձնական պարտականություններ և խնդիրներ՝

Զբաղվում է Ընկերության Խորհրդի ընդհանուր հարցերով: Իր պարտականությունները կատարում է, ելնելով Ընկերության շահերից, իրականացնում է իր իրավունքները և Ընկերության նկատմամբ իր պարտականությունները բարեխիղճ և ողջամիտ կերպով:

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ
ՈՍՏԱՆԻԿ ԶԱՎԵՆԻ ՄԱՐՈՒԽՅԱՆ

Միջուկային անվտանգության վարժանքային տարածաշրջանային ուսումնական կենտրոնի ղեկավար, պրոֆեսոր

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝

04 մարտի, 1946թ.

Կրթություն՝

1964 թ-ին ընդունվել է Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ:
1969 թ-ն ավարտել է ԵրՊԻ-ի Էլեկտրատեխնիկական ֆակուլտետը:
1971-1974 թթ սովորել է ԵրՊԻ-ի ասպիրանտուրայում:
1978-1979 թթ Բուդապեշտի տեխնիկական համալսարանում անցել է ուսումնագիտական ստաժավորում:
1996 թ-ին ուսումնագիտական վարժանք է անցել Աթենքի տեխնիկական համալսարանում,
1997 թ-ին՝ Փարիզի միջուկային տեխնոլոգիաների հետազոտական համալսարանում, 2001 թվականին՝ Լունդի համալսարանում:

Պետական պարգևներ, խրախուսանքներ՝

2005 թվականին պարգևատրվել է Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի ոսկե մեդալով:
2005 թվականին՝ Երևանի պետական համալսարանի ոսկե մեդալով:
2006 թվականին՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ոսկե հուշամեդալով:
2007 թվականին՝ ԼՂՀ «Մայրություն» կոմիտեի «Մայրական երախտագիտություն» մեդալով:
2008 թվականին՝ ՀՀ Նախագահի «Անանիա Շիրակացի» մեդալով:
2008 թվականին՝ ՀՀ ԿԳ նախարարության ոսկե հուշամեդալով:
2008 թվականին՝ Հայաստանի պետական ագրարային համալսարանի ոսկե հուշամեդալով:
2008 թվականին՝ ՀՀ Ճարտարագիտական ակադեմիայի ոսկե մեդալով:
2009 թվականին՝ «Մայրական պատգամ» մեդալով:
2010 թվականին՝ Արցախի պետական համալսարանի ոսկե մեդալով:
2011 թվականին՝ ԼՂՀ «Երախտագիտության» մեդալով:

Արժանացել է 2 տասնյակից ավելի պատվոգրերի և վաստակագրերի:

Աշխատանքային փորձառություն՝

1969թ.- Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Էներգետիկական ֆակուլտետի «Ջերմաէներգետիկա» ամբիոնի ասիստենտ, ապա՝ ավագ դասախոս:
1983-1997 թթ.- ԵրՊԻ-ի (հետագայում՝ ՀՊՃՀ) Էներգետիկական ֆակուլտետի «Ջերմաէներգետիկա» ամբիոնի դոցենտ:
1997 թվականից առ այսօր- ՀՊՃՀ (այժմ՝ ՀԱՊՀ) «Ջերմաէներգետիկա» ամբիոնի պրոֆեսոր:
1983-1987 թթ.- ԵրՊԻ-ի էներգետիկական ֆակուլտետի դեկանի տեղակալ:
1987-1990 թթ.- նույն ֆակուլտետի դեկան:
1990 թվականի ապրիլ-դեկտեմբեր - ԵրՊԻ-ի Ուսումնամեթոդական վարչության պետ:
1990-1992 թթ.- ԵրՊԻ-ի (հետագայում՝ ՀՊՃՀ) Ուսումնամեթոդական վարչության պետ-պրոռեկտոր:
1992-1993 թթ.- ՀՊՃՀ Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր:
1993-1999 թթ.- ՀՊՃՀ Ուսումնամեթոդական աշխատանքների գծով փոխպրեզիդենտ:
1999 թվականի փետրվար-հունիս - ՀՀ ԿԳ նախարարի առաջին տեղակալ:
1999-2003 թթ.- ՀՊՃՀ Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր:
2001-2012 թթ.- ՀՊՃՀ «Ջերմաէներգետիկա և շրջակա միջավայրի պաշտպանություն» ամբիոնի վարիչ:
2006-2011 թթ.- ՀՊՃՀ ռեկտոր:
2012 թվականից առ այսօր- Միջուկային անվտանգության տարածաշրջանային ուսումնավարժանքային կենտրոնի (ՄԱՏՈՒԿ) ղեկավար:
2015-2020 թթ.- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռեկտոր:
2003-2006 թթ.- ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, Պետահիրավական հարցերի մշտական և եվրոպական կառույցներին ինտեգրման ժամանակավոր հանձնաժողովների անդամ:
2003 թվականից ՀՀ Ճարտարագիտական ակադեմիայի իսկական անդամ է:
2006 թվականից էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ է:
2010 թվականից՝ Միջազգային ինժեներական ակադեմիայի իսկական անդամ:

Հիմանական որակավորում՝
Ճարտարագետ, տ.գ.թ., պրոֆեսոր:

26 ուսումնական ձեռնարկների և դասագրքերի, 128 գիտական, գիտամեթոդական, հրապարակախոսական հոդվածների և 2 գյուտի հեղինակ է:

Ընկերությունում աշխատած տարիներ՝ Ընկերությունում չի աշխատել:

Անձնական պարտականություններ և խնդիրներ՝

Զբաղվում է Ընկերության Խորհրդի ընդհանուր հարցերով: Իր պարտականությունները կատարում է, ելնելով Ընկերության շահերից, իրականացնում է իր իրավունքները և Ընկերության նկատմամբ իր պարտականությունները բարեխիղճ և ողջամիտ կերպով:

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ
ՆԱՏԱԼՅԱ ԿԱՐԵՆԻ ՍԱՐՋԱՆՅԱՆ
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կորպորատիվ և հասարակության հետ կապերի դեպարտամենտի պետ

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝

08 նոյեմբերի, 1982թ.

Կրթություն՝

1999-2004թթ. Երևանի պետական Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան:
2018թ. Project Management Institute, PMP 2178086

Աշխատանքային փորձառություն՝

2002-2003թթ. «Կենտրոն հեռուստաընկերություն» լրատվական հաղորդումների լրագրող

2004-2009թթ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության Հասարակայնության և ՋԼՄ հետ կապերի թարգմանիչ, ավագ մասնագետ

2005-2006թթ."Program of Agricultural Reforms Assistance" ԾԻԳ, թարգմանիչ

2009-2020թթ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության Հասարակայնության և կորպորատիվ կապերի դեպարտամենտի պետ

2013-2015թթ. "Shopping guide" ամսագրի համահիմնադիր, գլխավոր խմբագիր

2016-2017թթ. Հայաստանի հանրային հեռուստաընկերության Հասարակայնության հետ կապերի և մարքեթինգի տնօրեն

2020-2022թթ. “We Do Tech” IT Company, Հասարակայնության հետ կապերի և մարքեթինգի տնօրեն, նախագծերի ղեկավար

2020թ.-ից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության Հասարակայնության և կորպորատիվ կապերի դեպարտամենտի պետ, սոցիալական և գենդերային հարցերի համակարգող

Հիմնական որակավորում՝

Լեզվաբան, անգլերեն և իսպաներեն լեզուների մասնագետ, նախագծերի ղեկավար:

Ընկերությունում աշխատած տարիներ՝

Ընկերությունում չի աշխատել:

Անձնական պարտականություններ և խնդիրներ՝

Զբաղվում է Ընկերության Խորհրդի ընդհանուր հարցերով: Իր պարտականությունները կատարում է, ելնելով Ընկերության շահերից, իրականացնում է իր իրավունքները և Ընկերության նկատմամբ իր պարտականությունները բարեխիղճ և ողջամիտ կերպով:

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ
ԱՐՄԵՆ ՄԵԼԻՔ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի պետական բաժնեմասի կառավարման վարչության պետ

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝

01 հուլիսի, 1963թ.

Կրթություն՝

1980-1985թթ. Երևանի Կ.Մարքսի անվան Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանակիր պոլիտեխնիկական ինստիտուտ,

1988-1991թթ. Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի համամիութենական ֆինանսատնտեսագիտական ինստիտուտ

Պետական պարգևներ՝

ՀՀ վարչապետի շնորհակալագիր:

Աշխատանքային փորձառություն՝

1985-1990թթ. «Երևանի Նաիրիտ» գիտաարտադրական միավորում՝ վարպետ

1990-1993թթ. «Հայջրշինինդուստրիա» արտադրական միավորման «Մասիսի մեխանիկական վերանորոգման» գործարանի տեղամասի պետ, բաժնի պետ, փոխտնօրեն

1993-1994թթ. ՀՀ նյութական ռեսուրսների նախարարության «Հայկոնտրակտ» ՊՁ՝ առաջատար մասնագետ

1994-1997թթ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական ունեցվածքի հաշվառման և ապապետականացման վարչություն՝ առաջին կարգի տնտեսագետ, առաջատար տնտեսագետ, գլխավոր տնտեսագետ

1997-2000թթ. ՀՀ սեփականաշնորհման նախարարություն՝ գլխավոր մասնագետ, բաժնի պետի տեղակալ, բաժնի պետ

2000-2003թթ. ՀՀ պետական գույքի կառավարման նախարարություն՝ բաժնի պետ, վարչության պետ

2003-2007թթ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ բաժնի պետ

2019թ.-ից ՀՀ ՏԿԵՆ Պետական գույքի կառավարման կոմիտեի պետական բաժնեմասի կառավարման վարչության պետ

Հիմնական որակավորում՝

Ինժեներ-էլեկտրիկ, Տնտեսագետ

Ընկերությունում աշխատած տարիներ՝

Ընկերությունում չի աշխատել:

Անձնական պարտականություններ և խնդիրներ՝

Օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում ընկերության պետական բաժնեմասի նկատմամբ: Իր պարտականությունները կատարում է, ելնելով Ընկերության շահերից, իրականացնում է իր իրավունքները և Ընկերության նկատմամբ իր պարտականությունները բարեխիղճ և ողջամիտ կերպով:

Աշխատանքն այլ ընկերությունների խորհուրդներում՝

«ԲԷՑ» ՓԲԸ, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ:

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱԼԻՍԱ ՄԵՐՈՒԺԱՆԻ
«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ գլխավոր տնօրենի Պ/Կ

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ

14 սեպտեմբերի 1975թ.

Կրթություն՝

1992-1997թթ. Երևանի Ժողովրդական տնտեսության ինստիտուտ, տնտեսագետ,

2000-2004թթ. ՀՀ արդյունաբերության առևտրի նախարարություն,

Ը 00002 Տնտեսության նրա ճյուղերի տնտեսագիտության և կառավարում, ասպիրանտուրա

Գիտական աշխատություններ՝

տպագրված գիտական հոդվածներ

Աշխատանքային փորձ՝

1996-2002 թթ. «Քար և սիլիկատներ» ԳԱՖ տնտեսագետ,

2002-2005թթ. «Արնիիկպ» ՀՁ ՓԲԸ հաշվապահ-տնտեսագետ,

2005-2005թթ. «Ստանկոսնաբ» ՓԲԸ գլխավոր հաշվապահ, համատեղության կարգով,

2005-2017թթ. «ՍԱՍ Գրուպ» ՍՊԸ գլխավոր հաշվապահ,

2008-2013թթ. «ՌԱ» ՍՊԸ գլխավոր հաշվապահ,

2013-2017թթ. «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ ներքին աուդիտ, գլխավոր հաշվապահ

2016-2017թթ. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ ֆինանսատնտեսագիտական, մատակարարման հարցերով տնօրեն

2017թ. Հունիսից մինչ այսօր «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ ֆինանսական տնօրեն,

2019թ. մինչ այսօր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ֆինանսական հաշվառում ամբիոնի դասախոս,

2020թ. մայիս-դեկտեմբեր «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող

2024թ. Հունվարից մինչ այսօր «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող

Հիմնական որակավորում՝

Տնտեսագետ-ֆինանսիստ

Ընկերությունում աշխատած տարիներ՝

Ընկերությունում աշխատում է 2017թ. հունիսի 1-ից՝ որպես ֆինանսական տնօրեն,

2020 թ. մայիսի 6-ից գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող,

2024թ. հունվարից մինչ օրս «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պարտականությունները կատարող;

Անձնական պարտականություններ և խնդիրներ

- բարեխիղճ և ողջամիտ կերպով մասնակցել ընկերության խորհրդի գործառույթների և նպատակների իրականացման գործընթացին,
- մասնակցել ընկերության խորհրդի նիստերին,
- իր պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ընկերության շահերից,
- հետևել ընկերության զարգացման և ներդրումային ծրագրերի հետ կապված որոշումների կատարմանը:

ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականի ընթացքում Խորհուրդը գումարել է 9 (ինը) նիստ, որից ութը՝ հեռակա քվեարկության միջոցով:

4. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Խորհրդի հանձնաժողովներ չեն ստեղծվել:

Աուդիտի հանձնաժողով

Խորհուրդն աուդիտի հանձնաժողով չի ստեղծել:

5. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ընկերության գործադիր մարմինը հանդիսանում է գլխավոր տնօրենը:

6. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

ՀՀ ՏԿԵ Նախարարության և «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի միջև 05.02.2025 թվականին կնքված № «ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-25/23-1» պայմանագրի հիման վրա Ընկերության ներքին աուդիտն իրականացրել է «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ն:

7.ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ընկերության խորհրդի կողմից կորպորատիվ քարտուղար է նշանակվել Արմեն Հենրիկի Զաքարյանը՝ խորհրդի 16.11.2023թ. թիվ 06 արձանագրությամբ:

8.ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

2024թ. դեկտեմբերի 25-ին, Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի կողմից հաստատվել է անց կացված մրցույթի արդյունքում հաղթած ընկերությունը՝ «Ալֆա Աուդիտ» ՍՊԸ, որի կողմից իրականացվել է Ընկերության 2024թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ:

9. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան հաշվետվությունը հաստատման է ներկայացվելու Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում՝ «30» 06 .2025 թվականին:

Տարեկան հաշվետվությունը կտեղադրվի Ընկերության կայքում՝ www.ytpc.am:

Ստորագրված է՝

Խորհրդի նախագահ _____ **Արթուր Երիցյան**

Գլխավոր տնօրենի պ/կ _____ **Ալիսա Բաղդասարյան**

ՀԱՎԵԼՎԱԾ № 2

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ -

«ՀԵՏԵՎԻՐ ԿԱՄ ԲԱՑԱՏՐԻՐ»

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Բաժնետերերի Ընդհանուր ժողովի (ԲԸԺ) իրավասությունները և բաժնետերերի իրավունքները			
1.	Ընկերության կանոնադրությունը նախատեսում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել քվեարկության հարցերը:	Ոչ	Կանոնադրությամբ նման ընթացակարգ նախատեսված չէ, քանի որ ընկերության 100% բաժնետոմսերը պատկանում են ՀՀ , ի դեմս ՀՀ կառավարության, իսկ բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:
2.	Բաժնետերերի արտահերթ ժողովի օրակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը նախապես տրամադրվել են բաժնետերերին:	Այո	
3.	ԲԸԺ-ի օրակարգը ներառում է քվեարկության դրվելիք հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը, ինչպես նաև Խորհրդի կողմից ԲԸԺ-ի հաստատմանը ներկայացված աուդիտն իրականացնող անձի անունը:	Այո	
4.	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում քվեարկել հեռակա կարգով (օր. էլեկտրոնային քվեարկությամբ):	Ոչ	Ընկերության կանոնադրությամբ նման ընթացակարգեր սահմանված չեն, քանի որ բաժնետերը մեկն է:
5.	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում նշանակել ներկայացուցիչ:	Այո	Ըստ Ընկերության կանոնադրության 11.4 կետի 11.4.1. ա) ենթակետ (քվեարկությունը ժողովում):

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
6.	Արդյո՞ք բաժնետերերը ԲԸԺ-ում քվեարկում են քվեաթերթիկների միջոցով: (Այս կարգը կարող է չգործել միայն մեկ բաժնետեր ունեցող ընկերությունների դեպքում):	Ոչ	Ընկերության բաժնետերը մեկն է:
7.	Արդյո՞ք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալու ժողովի գումարումից մինչև 10 օր առաջ:	Այո	
8.	Արդյո՞ք Խորհուրդը Ժողովի ժամանակ պատասխանել է բաժնետերերի հարցերին:	Այո	
9.	Արդյո՞ք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալ Ժողովի ժամանակ:	Այո	
10.	Արդյո՞ք Խորհուրդը պատասխանել է առաջադրված բոլոր հարցերին:	Այո	
Շահութաբաժինների վճարման քաղաքականություն			

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
11.	Ընկերության շահութաբաժնի վճարման քաղաքականությունը իրականացվում է ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 12-ի N1748-Ն որոշմամբ սահմանված կարգով, համաձայն որի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սակագնային կարգավորման ենթակա առևտրային կազմակերպությունների համար կարգավորվող գործունեության մասով հաշվետու տարվա զուտ շահույթի մեծություն է ընդունվում հաշվետու տարվա համար յուրաքանչյուր առևտրային կազմակերպության գործունեության արդյունքում պլանավորված և ՀԾԿ հանձնաժողովի կողմից հաստատված սակագնի հաշվարկում ներառված՝ տարեկան շահույթի մեծությունը:	Այո	Ընկերությունը շահութաբաժինների վճարումը իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարի 2024թ.-ի փետրվարի 27-ի N47-Լ հրամանով հաստատված <<50 տոկոսից ավել պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների և Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սակագնային կարգավորման ենթակա ընկերությունների շահութաբաժնի հաշվարկման հաշվարկ>>-ի համաձայն:
Պետությունը որպես սեփականատեր [միայն Պետական ընկերությունների համար			
12.	Պետությունն արդյո՞ք չի միջամտում Պետական Ընկերության (ՊԸ) առօրյա ղեկավարմանը:	Այո	Չի միջամտում:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
13.	Պետությունը հրապարակել է սեփականության քաղաքականություն, որը սահմանում է պետական սեփականության ընդհանուր նպատակները, այն հատուկ նպատակները, որոնց պետք է հասնել, ինչպես նաև արդյո՞ք ընկերությունը ֆինանսավորվում է իր շահույթների հաշվին, թե ամբողջովին կամ մասնակիորեն ֆինանսավորվում է պետության կողմից:	Ոչ	Պետությունը նման քաղաքականություն չունի, չի հրապարակել, իսկ Ընկերությունը ֆինանսավորվում է իր շահույթի հաշվին:
14.	Արդյո՞ք ՊԸ-ը մատուցում է այնպիսի ծառայություններ, որոնք, համաձայն պետական քաղաքականության, կարող են մատուցվել միայն պետական հատվածի կողմից:	Ոչ	Քանի որ որևէ իրավական ակտով նշված չէ, որ էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրությունը պետական մենաշնորհ է:
	Խորհուրդ		
15.	Ընկերությունը հիմնադրել է հստակ պարտականություններով և գործառույթներով օժտված խորհուրդ, որի մասին հրապարակված է ընկերության ինտերնետային կայքում:	Այո	Խորհուրդը ղեկավարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, ընկերության խորհրդի գործունեության կանոնակարգով /հաստատվել է ընկերության ընդհանուր ժողովի 29.01.2020թ. որոշմամբ/ և այլ իրավական ակտերով, որի մասին հրապարակված է ընկերության ինտերնետային կայքում
16.	Արդյո՞ք Խորհուրդը կազմում է հաշվետվություն Կանոնագրքի դրույթներին Ընկերության հետևելու վերաբերյալ:	Ոչ	Խորհուրդը Կանոնագրքի դրույթներին հետևելու հաշվետվություն չի կազմում:
17.	Արդյո՞ք Խորհուրդը նշանակում և ազատում է գործադիր մարմնի ղեկավարին, ինչպես նաև ձևավորում է կոլեգիալ գործադիր մարմին (այդպիսին նախատեսված լինելու դեպքում), նշանակում և ազատում դրա անդամներին:	Ոչ	Ընկերության գլխավոր տնօրենը նշանակվում է ժողովի (Բաժնետիրոջ) որոշմամբ, համաձայն Ընկերության կանոնադրության 14-րդ հոդվածի 14.2-րդ կետի:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
18.	Արդյո՞ք Խորհրդում ոչ գործադիր անդամները կազմում են մեծամասնություն, և արդյո՞ք նրանցից առնվազն երկուսն անկախ են:	Այո	«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ընկերությունում տնօրենների խորհուրդները բաղկացած են 6 անդամից՝ 3 անդամ առաջարկվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից, իսկ ընկերության գլխավոր տնօրենը՝ ի պաշտոնե, մեկական անդամ՝ էլեկտրաէներգետիկական շուկայի մասնավոր հատվածը ներկայացնող ընկերության, էներգետիկական ոլորտին առնչվող ակադեմիական (գիտական) որևէ հաստատության կողմից: Հիմք 1577-Ն առ 14.11.2019 թ. ՀՀ Կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի N 1694-Ն, 2003 թ. նոյեմբերի 6-ի N 1674-Ն ԵՎ 2010 թ. ապրիլի 29-ի N 474-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:
19.	Խորհրդի հանձնաժողովները տարեկան մեկ անգամ անցկացնում են Ընկերության ներքին կորպորատիվ փաստաթղթերի (կանոնադրություն, կանոնակարգեր և այլ)՝ իրենց իրավասության ոլորտին վերաբերող դրույթների փորձաքննություն և համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում խորհրդին:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
20	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:
21.	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:
	Խորհրդի անդամների նշանակումը		
22	Խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը ԲԸԺ-ին զուգակցված է առաջադրված թեկնածուի պաշտոնի նկարագրով և համառոտ կենսագրականով, որտեղ շարադրված են ստանձնելիք պարտականությունները, գործառույթները և կենսագրական տվյալները:	Այո	Համաձայն ՀՀ կառավարության 06.11.2003թ. N 1694-Ն որոշման և 1577-Ն առ 14.11.2019թ. ՀՀ Կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի N 1694-Ն, 2003 թ. նոյեմբերի 6-ի N 1674-Ն ԵՎ 2010 թ. ապրիլի 29-ի N 474-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:
23	Խորհրդի անդամների առաջադրված թեկնածուների պաշտոնի նկարագիրը և համառոտ կենսագրականները հրապարակվել են Ընկերության ինտերնետային կայքում՝ ԲԸԺ-ից առնվազն 30 օր առաջ:	Այո	Հրապարակված է:
	Խորհուրդ. Գործունեության մոնիթորինգ		
24	Խորհուրդը, համաձայն գնահատման քաղաքականության, դիտարկում է գործադիր մարմնի գործունեությունը:	Ոչ	Գործադիր մարմնի գործունեությունը գնահատվում է ՀՀ կառավարության 2017թ հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ:
25	Խորհուրդն իրականացնում է իր գործունեության արդյունավետության տարեկան գնահատում՝ համաձայն հաստատված գնահատման քաղաքականության:	Ոչ	Խորհուրդը գնահատման քաղաքականություն չի մշակել:
	Խորհրդի նիստերի հաճախելիություն		

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
26	Խորհրդի նիստերին խորհրդի անդամների մասնակցության մասին տվյալները ներառված են ԿԿ Հայտարարագրի նկարագրական մասում և/կամ ընկերության տարեկան հաշվետվությունում:	Այո	
	ՊԸ-ն Խորհրդի անդամներին ներկայացվող պահանջները		
27	Արդյո՞ք ՊԸ-ն խորհրդի անդամները բացահայտում են քաղաքական միավորումներին իրենց անդամությունը:	Ոչ	Նման պահանջ չի ներկայացվել:
28	Այն քաղաքացիական ծառայողները, ովքեր ի պաշտոնե կարգավորիչ իրավասություններ ունեն տվյալ ՊԸ-ն նկատմամբ, արդյո՞ք ընդգրկվում են տվյալ ՊԸ-ն խորհրդի կազմում:	Այո	
29	Խորհրդի անդամները պետք է նշանակվեն և պաշտոնավարեն նվազագույնը 3 տարի, բացառությամբ եթե պաշտոնանկ են արվում կարգապահական խախտումների կամ պարտականությունների ոչ պատշաճ կատարման հիմքերով:	Ոչ	Ըստ Կանոնակարգի 8- րդ կետի:
	Խորհրդի անդամների վերաբերյալ տվյալները		
30	Ինչպես պահանջվում է Կանոնագրքով, տարեկան հաշվետվությունը և/կամ ԿԿ հայտարարագրի նկարագրական մասը մանրամասն տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների մասին:	Այո	ԿԿ հայտարարագրի նկարագրական մասը տեղեկություններ է պարունակում Խորհրդի անդամների մասին:
	Խորհրդի նիստերի տարեկան պլան		
31.	ՊԸ-ների խորհրդի նիստերը պետք է հրավիրվեն նվազագույնը եռամսյակը մեկ անգամ:	Ոչ	Ըստ Կանոնակարգի 5.1- րդ կետի:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
32	Խորհրդի նիստերը գումարվում են համաձայն հաստատված տարեկան պլանի: Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը Խորհրդի անդամներին են ուղարկվում նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ:	Այո	Խորհրդի նիստերի գումարումը իրականացվում է համաձայն խորհրդի գործունեության կանոնակարգի, նիստի անցկացման մասին խորհրդի անդամներին ծանուցվում է ոչ ուշ քան նիստից 10 օր առաջ, ներկայացնելով նիստի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը: Խորհուրդի նախագահը կարող է ընդունել որոշում՝ այդ ժամկետը կրճատելով մինչև 3 օր:
	Խորհրդի նախագահը		
33	Խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնները չեն համատեղվում:	Այո	
34	Ընկերության կանոնադրությամբ հստակ տարանջատված են Խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի իրավասությունները:	Այո	Ընկերության կանոնադրության 13-րդ հոդվածի 13.6-րդ կետի և 14–րդ հոդվածի դրույթներով հստակ տարանջատված են:
35	Խորհրդի նախագահը պատասխանատու է, որպեսզի խորհրդի նորընտիր անդամներն իրենց պաշտոնավարման սկզբում պատշաճ ծանուցվեն ընկերության և իրենց պարտականությունների մասին: Ընկերությունն ունի խորհրդի անդամների համար նախատեսված ուսուցման ծրագրեր:	Այո Ոչ	ԱՅՈ՝ խորհրդի նախագահը , խորհրդի նորընտիր անդամին, նրա մասնակցությամբ խորհրդի առաջին նիստին պատշաճ ծանուցում է Ընկերության և խորհրդի անդամների պարտականությունների մասին: Ոչ՝ Ընկերության խորհրդի անդամների համար ուսուցման ծրագիր նախատեսված չէ:
	Խորհրդի անդամների գործունեության վնասների ապահովագրումը և նրանց ազատումը պատասխանատվությունից		

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
36	Ընկերության կանոնադրությունը դրույթներ է պարունակում խորհրդի անդամներին այն վնասների փոխհատուցումից ազատելու վերաբերյալ, որոնք վրա են հասել նրանց պաշտոնական պարտականությունների իրականացման հետևանքով: Ընկերությունն ապահովագրվել է Խորհրդի անդամների գործունեության վնասների ռիսկից:	Ոչ	Ընկերությունը չի ապահովագրվել խորհրդի անդամների գործունեության վնասի ռիսկից, քանի որ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ այն նախատեսված չէ և նախատեսված է ըստ Կանոնակարգի 8.4 - րդ կետի:
	Աուդիտի հանձնաժողով		
37	Ընկերությունները պարտավոր են ստեղծել խորհրդի ոչ-գործադիր անդամներից բաղկացած աուդիտի հանձնաժողով, որտեղ մեծամասնությունը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահը պետք է լինեն անկախ:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նախատեսված չլինելու պատճառով:
38	Աուդիտի հանձնաժողովի բոլոր անդամները համապատասխան որակավորում ունեն ֆինանսների, հաշվապահության, աուդիտի և ներքին հսկողության հարցերում:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նախատեսված չլինելու պատճառով:
39	Աուդիտի հանձնաժողովը հետևում է ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանը և ընկերության ֆինանսական գործունեությանը վերաբերող հայտարարություններին՝ դիտարկելով դրանցում տեղ գտած կարևոր պնդումները ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ, վերանայում եռամսյակային և տարեկան հաշվետվությունները և Խորհրդին ու ԲԸԺ-ին առաջարկություն ներկայացնում դրանց հաստատման վերաբերյալ:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նախատեսված չլինելու պատճառով:
40	Աուդիտի հանձնաժողովը նվազագույնը տարեկան մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ քննարկելու աուդիտի հետ կապված հարցերը:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նախատեսված չլինելու պատճառով:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
41.	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է վերանայելու ընկերության ներքին վերահսկողության, ներքին աուդիտի, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգերը:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նախատեսված չլինելու պատճառով:
42	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության, նրա աշխատանքի պայմանների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել խորհրդին, դրանք՝ ԲԸԺ-ի ընդհանուր ժողովի քննարկմանը և վերջնական հաստատմանը ներկայացնելու համար:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նախատեսված չլինելու պատճառով:
43	Աուդիտի հանձնաժողովը մշակել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախության չափորոշիչներ:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նախատեսված չլինելու պատճառով:
44	Աուդիտի հանձնաժողովը դիտարկել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը՝ համաձայն հաստատված չափորոշիչների, և արդյունքները ներառվել են տարեկան հաշվետվությունում:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նախատեսված չլինելու պատճառով:
45	Աուդիտի հանձնաժողովը պահում է իր նիստերի արձանագրությունները:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նախատեսված չլինելու պատճառով:
	Ներքին աուդիտ		
46	Ներքին աուդիտն իրականացնող անձը նշանակվում և ազատվում է Աուդիտի հանձնաժողովի համաձայնությամբ:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նման պահանջ սահմանված չէ:
47	Ներքին աուդիտն իրականացնող անձը անմիջականորեն հաշվետու է Աուդիտի հանձնաժողովին:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նման պահանջ սահմանված չէ:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
48	Ներքին աուդիտն իրականացնող անձն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Աուդիտի հանձնաժողովի կողմից հաստատված տարեկան պլանի և այդ մասին պարբերաբար զեկուցում է Աուդիտի հանձնաժողովին:	Ոչ	Աուդիտի հանձնաժողով չի ստեղծվել ընկերության կանոնադրությամբ նման պահանջ սահմանված չէ:
49	Ներքին աուդիտն իրականացնող անձը պատասխանատու է ներքին հսկողության լիարժեքության դիտարկման և ներքին հսկողության ընթացակարգերի իրականացման համար:	Այո	ՀՀ ՏԿԵ Նախարարության և «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի միջև 05.02.2025 թվականին կնքված № «ՏԿԵՆ-ԷԱՃԾՁԲ-25/23-1» պայմանագրի հիման վրա «Գլոբ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է Ընկերության ֆինանսական և գնումների ներքին աուդիտ 2024 թվականի համար՝ համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի և Նախարարության ներքին աուդիտի կանոնակարգի:
	Արտաքին աուդիտ		
50	Ընկերության արտաքին աուդիտ իրականացնող անձը չպետք է մատուցի Կանոնագրքի 28-րդ կետի 2) ենթակետի ոչ աուդիտորական ծառայությունները:	Այո	
51.	Արտաքին աուդիտ իրականացնող անձի վարձատրության չափը բացահայտվել և հաստատվել է ԲԸԺ-ում:	Ոչ	Ըստ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին կետի ժբ) ենթակետի և Ընկերության կանոնադրության 13.4-րդ հոդվածի 13.4.1-րդ կետի ժա) ենթակետի Խորհուրդն է սահմանում աուդիտի վարձատրության չափը:
52	Ընկերությունն ունի արտաքին աուդիտն իրականացնող անձի ռոտացիայի քաղաքականություն:	Ոչ	Ընկերությունը ռոտացիայի քաղաքականություն չունի, բայց աուդիտի ընտրությունը կատարվում է Գնումների մասին օրենքի պահանջներին համապատասխան:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	Խորհրդի այլ հանձնաժողովները		
53	Ընկերությունը ստեղծել է Խորհրդի անդամներից բաղկացած այլ հանձնաժողովներ:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել ընկերության կանոնադրությամբ նման պահանջ սահմանված չլինելու պատճառով:
54	Խորհրդի բոլոր հանձնաժողովները գործում են համաձայն իրենց կանոնակարգերի, որտեղ սահմանվում են դրանց գործառույթները, դերն ու պարտականությունները:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել ընկերության կանոնադրությամբ նման պահանջ սահմանված չլինելու պատճառով:
55	ՊԸ-ն խորհուրդը պետք է ունենա թեկնածությունների առաջադրման հանձնաժողով, որը հրավիրում է խորհրդի անդամության թեկնածուներին, սահմանում է խորհրդի անդամների պաշտոնի նկարագիրը, վերոնշյալ գործընթացի թափանցիկությունը և անաչառությունը ապահովելու նպատակով իրականացնում է գովազդային աշխատանքներ (այդ թվում՝ առաջադրման հանձնաժողովում ձևավորվում է թեկնածուների ընտրման հանձնախումբ՝ որտեղ ընդգրկվում են ՊԸ-ն խորհրդի նախագահը և գործադիր մարմնի ղեկավարը, և որը մշտապես գնահատում է թեկնածուներին՝ հիմնվելով նրանց փորձի և որակավորման, ինչպես նաև պաշտոնի նկարագրին նրանց համապատասխանության վրա:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել ընկերության կանոնադրությամբ նման պահանջ սահմանված չլինելու պատճառով:
56	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեհ ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել ընկերության կանոնադրությամբ նման պահանջ սահմանված չլինելու պատճառով:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
57	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	Ոչ	Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել ընկերության կանոնադրությամբ նման պահանջ սահմանված չլինելու պատճառով:
	Կորպորատիվ քարտուղար		
58	Ընկերության խորհուրդը նշանակել է կորպորատիվ քարտուղար, որը հաշվետու է խորհրդին: Կորպորատիվ քարտուղար աջակցում է խորհրդի նիստերի կազմակերպմանը, մասնավորապես նիստերի պլանավորմանը, հրավիրմանը, անցկացմանը և արձանագրության վարմանը՝ համաձայն օրենքների և ընկերության ընթացակարգերի: Խորհուրդը սահմանում է կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը, ինչպես նաև նրա վարձատրության չափը:	Այո	Ընկերության Խորհուրդը կորպորատիվ քարտուղար է նշանակել Ա. Զաքարյանին՝ խորհրդի 16.11.2023թ. թիվ 06 արձանագրությամբ:
59	Կորպորատիվ քարտուղարն աջակցում է Խորհրդի նախագահին՝ դիտարկելու կորպորատիվ կառավարման ոլորտի ՀՀ օրենսդրության, Կանոնագրքի, Ընկերության կանոնադրության և կանոնակարգերի պահանջները Ընկերության կողմից կատարելը:	Այո	Կորպորատիվ քարտուղարն աջակցում է Խորհրդի նախագահին նշված հարցերում:
	Տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը		
	Տարեկան հաշվետվություն		
60	Ընկերությունը կազմել է հաշվետու տարվա տարեկան հաշվետվություն, որը ներկայացվել է բաժնետերերի հաստատմանը և հրապարակվել է ընկերության ինտերնետային կայքում:	Այո	Կհրապարակվի:
61.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ֆինանսական հաշվետվություն՝ կազմված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
62	Տարեկան հաշվետվությունը պարունակում է Ընկերության շահառուներին հասցեագրված տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս գնահատել ընկերության ներդրումը տնտեսական կայունության, սոցիալական բարեկեցության և բնապահպանական անվտանգության ապահովման գործում:	Ոչ	
63	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություն Ընկերության վարքագծի կանոնների վերաբերյալ և հղում ընկերության ինտերնետային կայքին, որտեղ այն տեղադրված է:	Ոչ Այո	Ընկերությունը վարքագծի կանոններ չի մշակել: Տարեկան հաշվետվությունը պարունակում է հղում ընկերության ինտերնետային կայքին:
64	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ԿԿ Հայտարարագիրը Կանոնագրքին հետևելու և/կամ մանրամասն բացատրությունը՝ չհետևելու և դրա պատճառների մասին:	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
65	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ Ընկերության փոխկապակցված անձանց հետ կնքված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքների մասին, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը՝ մանրամասն ներկայացնելով այդպիսի գործարքների հաստատման կամ վավերացման համար Ընկերության կողմից ընդունված քաղաքականությունը և ընթացակարգերը: Ընկերության և փոխկապակցված անձանց միջև փոխկապակցված այդպիսի գործարքների առկայության դեպքում նաև պետք է ներկայացնել Ընկերության գործարքներում փոխկապակցված անձանց գործարքների համամասնությունը, փոխկապակցված անձանց յուրաքանչյուր խմբի գործարքները, փոխկապակցված անձանց գործարքների պայմանների արդարության գնահատումը: Ընկերության և փոխկապակցված անձանց միջև այդպիսի գործարքների բացակայության դեպքում պետք է հստակ նշվի այդ մասին:	Ոչ	Ընկերությունը փոխկապակցված անձանց հետ գործարքներ չի կատարել, որոնց գումարը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 %-ը:
66	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:	Այո	
67	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության նշանակալից (10%-ից ավելի) բաժնետոմսերին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետող բաժնետերերի ցուցակը:	Ոչ	Ընկերության բաժնետերը մեկն է:
68	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության փոխկապակցված անձանց ցուցակը և փոխկապակցված անձանց հետ կնքված այն գործարքների ցանկը, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը:	Ոչ	Ընկերությունը փոխկապակցված անձանց հետ գործարքներ չի կատարել, որոնց գումարը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 %-ը:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
69	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, այդ թվում անկախ անդամների անունները և հակիրճ կենսագրությունը, ինչպես նաև տարվա ընթացքում հրաժարական տված և պաշտոնից հեռացված խորհրդի անդամների անունները, տարվա ընթացքում խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած բոլոր անձանց վարձատրության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև խորհրդի նիստերին նրանց մասնակցության վերաբերյալ տվյալները:	Այո	
70	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտ իրականացնող անձանց անունը և վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները:	Այո	
71.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի նկարագրությունը, այդ թվում՝ դուստր ընկերությունների, մասնաճյուղերի, մայր ընկերության, ինչպես նաև քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը փոխկապակցված այլ ընկերությունների հետ:	Այո Ոչ	ԱՅՈ՝ Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի նկարագրությունը: ՈՉ՝ Ընկերության բաժնետերը մեկն է:
72	Տարեկան հաշվետվությունը ներառում է Տնօրենի ամփոփիչ հաշվետվությունը նախորդ տարվա գործունեության վերաբերյալ, ռիսկային գործոնները, գալիք տարվա հեռանկարները, ընկերության ռազմավարությունը, տարվա ընթացում կնքված խոշոր գործարքները, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված գլխավոր փոփոխությունները, բացատրություն նախորդ տարվա ցուցանիշների հետ համեմատած ֆինանսական արդյունքների կարևոր փոփոխությունների վերաբերյալ, շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում՝ շահութաբաժինների վճարման առաջարկությունները:	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
73	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի վարձատրությունը:	Ոչ	
74	Տարեկան հաշվետվությունը ներառում է թողարկված բաժնետոմսերի քանակը և դասը կամ դասերը, և արժեթղթերի համապատասխան դասին տիրապետող բաժնետերերի իրավունքների ամփոփումը:	Այո	
	Ընկերության ինտերնետային կայքը		
75	Ընկերություն ունի ինտերնետային կայք, որտեղ առանձին բաժին նվիրված է կորպորատիվ կառավարմանը:	Այո	
76	Ընկերությանն ինտերնետային կայքը պետք է պարունակի վերջին 3 տարիների ԿԿ Հայտարարագրերը:	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
77	ՊԸ-ն պարտավոր է իր ինտերնետային կայքի միջոցով տեղեկացնել այն մասին, թե ինչպես է պետությունը պլանավորում մասնակցել Ընկերության կորպորատիվ կառավարմանը և ինչ ձևով է պատրաստվում իրականացնել սեփականատիրոջ իր քաղաքականությունը: ՊԸ-ը պարտավոր է իր ինտերնետային կայքում բացահայտել տեղեկատվություն իր գործունեության բոլոր այն ոլորտների մասին, որոնց վերաբերյալ որոշումների կայացումը չի կարող փոխանցվել Խորհրդին: ՊԸ-ը պարտավոր է իր ինտերնետային կայքի միջոցով տեղեկացնել այն մասին, թե արդյոք պետության քաղաքականության շրջանակում ընկերության գործունեությունը ենթակա է հատուկ կանոնակարգված վերահսկման և արդյոք այդ վերահսկողությունն իրականացվում է: ՊԸ-ն ինտերնետային կայքում պետք է նաև տեղեկություններ լինեն ՊԸ-ն խորհրդի գործունեության չափանիշների մասին: ՊԸ-ն պարտավոր է իր ինտերնետային կայքում հրապարակել շահառուներին վերաբերող ցանկացած նշանակալից տեղեկություններ:	ԱՅՈ ՈՉ ՈՉ ԱՅՈ ՈՉ ԱՅՈ	Այո՝ Պետությունը ընկերության կորպորատիվ կառավարմանը մասնակցում և իր սեփականատիրոջ քաղաքականությունը իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջոցով: Ոչ՝ Ընկերությունը իր գործունեությունը իրականացնում է միայն էներգետիկայի ոլորտում և դրա հետ կապված բոլոր որոշումները փոխանցվում են Ընկերության խորհրդին: Ոչ՝ Պետությունը քաղաքականություն չի մշակել Ընկերության գործունեության նկատմամբ հատուկ կանոնակարգված վերահսկման մասին և պետությունը նման վերահսկողություն չի իրականացնում: Այո՝ Ընկերության կողմից հիմնական գործունեությունը հանդիսացող էլեկտրաէներգիայի առաքման և հզորության սակագինը սահմանվում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ: Ոչ՝ Ընկերության խորհուրդը գնահատման քաղաքականություն չի մշակել և գործունեության չափանիշներ չի սահմանել: Այո՝ Ընկերությունը իր ինտերնետային կայքում կիրապարակի շահառուներին վերաբերող նշանակալից տեղեկություններ:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
78	Ինտերնետային կայքը, կորպորատիվ կառավարման բաժինը և այնտեղ տեղադրված փաստաթղթերը հասանելի են նաև օտար լեզվով:	Ոչ	
79	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են ընկերության պետական գրանցման վկայականը և կանոնադրությունը՝ բոլոր գործող փոփոխություններով հանդերձ:	Այո	
80	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժինը տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների և գործադիր մարմնի վերաբերյալ՝ ներառելով նրանց համառոտ կենսագրականները և պաշտոնի նկարագրերը:	Այո	
81	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են խորհրդի, խորհրդի հանձնաժողովների Կանոնակարգերը և կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը:	Ոչ	Ընկերությունը չունի խորհրդի հանձնաժողովներ: Կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը դեռևս տեղադրված չէ Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում:
82	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է խորհրդի տարեկան գնահատման քաղաքականությունը:	Ոչ	Ընկերությունը չունի տարեկան գնահատման քաղաքականություն:
83	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են նախորդ 5 տարիների ԲԸԺ-երի նիստերի արձանագրությունները:	Ոչ	
84	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է հաստատված շահութաբաժինների վճարման քաղաքականությունը:	Ոչ	
85	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է Ընկերության կառուցվածքը և բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը:	Այո	Ինտերնետային կայքում հրապարակված է ընկերության կառուցվածքը:Բաժնետոմսերը պատկանում են միակ բաժնետիրոջը:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
86	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են Ընկերության նախորդ 3 տարիների տարեկան հաշվետվությունները:	Այո	
87	ՊԸ-ում պետությունը ներկայացնող պետական մարմինը Տարեկան հաշվետվությունում/ինտերնետային կայքում բացահայտել է Ընկերությանը տրամադրված որևէ պետական օգնության, սուբսիդիաների, դրամաշնորհների, ինչպես նաև պարտավորությունների մասին տեղեկությունները: Անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցները, ղեկավարի անունը, ազգանունը, ինչպես նաև ուղղակի և անուղղակի ձևով պետությանը պատկանող բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկությունները պետք է ներառվեն տարեկան հաշվետվությունում և բացահայտվեն ՊԸ-ն ինտերնետային կայքում:	Ոչ	
	Վարքագծի կանոններ		
88	Ընկերությունը ընդունել է վարքագծի կանոններ:	Ոչ	Ընկերությունը մշակում է վարքագծի կանոններ:
89	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում կորպորատիվ արժեքների, գործարար վարքագծի, պետության և պաշտոնատար անձանց հետ հարաբերությունների, ինչպես նաև մրցակիցների հետ հարաբերությունների մասին:	Ոչ	Ընկերությունը մշակում է վարքագծի կանոններ:
90	Վարքագծի կանոնները դրույթներ են պարունակում «ահազանգումների», վարքագծի կանոնների խախտման, ինչպես նաև այդ խախտումների մասին հաղորդելիս գաղտնիության պահպանման մասին:	Ոչ	Ընկերությունը մշակում է վարքագծի կանոններ:
91.	Ընկերությունը նշանակել է պաշտոնյա, ով պատասխանատու է վարքագծի կանոններին հետևելու մոնիթորինգի համար:	Ոչ	Ընկերությունը մշակում է վարքագծի կանոններ:
	Կանոնադրական կապիտալի ավելացումը		

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
92	Կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշումների մասին Խորհուրդը անհապաղ տեղեկացրել է բոլոր բաժնետերերին:	Այո	Եղել է կանոնադրական կապիտալի փոփոխություն:
	Շահառուներ		
93	Խորհուրդը սահմանել է այն շահառուների շրջանակը, որոնք համապատասխանում են ընկերության գործունեությանը, օրինական շահեր և սպասելիքներ ունեն Ընկերությունից:	Ոչ	Ընկերությունը չի սահմանել շահառուների շրջանակ:
94	Ընկերությունը ընդունել է քաղաքակա-նություն՝ միտված շահառուների շահերը և սպասելիքները հաշվի առնելուն:	Ոչ	Ընկերությունը շահառուների շրջանակ չի սահմանել:
95	Խորհուրդը մշակել և բացահայտել է շահառուների հետ հարաբերությունների հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը և տարեկան կտրվածքով բացահայտում է դրանց իրականացումը:	Ոչ	Ընկերությունը և խորհուրդը չի սահմանել շահառուների շրջանակ, ինչպես նաև քաղաքականություն նրանց հետ հարաբերությունների հաստատման մասին:
96	Շահառուների համար հասանելի են ընկերության ինտերնետային կայքի՝ տարեկան հաշվետվություններին և կորպորատիվ կառավարմանը վերաբերող բաժինները:	Այո	Հասանելի է: ԸՆկերույթյան ինտերնետային կայքի՝ տարեկան հաշվետվություններին վերաբերող բաժինները բաց են:
97	Պետական սեփականության քաղաքակա-նությունը ճանաչում է Ընկերության պա-տասխանատվությունը շահառուների առջև:	Ոչ	Նման պատասխանատվութուն չի նախատեսվել, Ընկերությունը պատասխանատվություն է կրում իր գույքով
98.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է բաժին՝ շահառուների հետ սեփականության քաղաքականության իրականացման վերաբերյալ:	Ոչ	Ընկերությունը չի սահմանել շահառուների շրջանակ: